Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Կալիֆոռնիայում

2013

Ինչ է Լրացուցիչ Ապահովության Եկամուտը

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI) դաշնակցային մի ծրագիր է, որ կարիքավոր մարդկանց ամսական կանխիկ փող է վճարում: Լրացուցիչ Ապահովության Եկամուտը նախատեսված է 65 եւ ավելի տարիք ունեցող մարդկանց համար, ինչպես նաեւ որեւէ տարիքի կույրերին եւ հաշմանդամներին՝ ներառյալ երեխաները:

Այն ստանալու պայմաններին բավարարելու համար դուք պետք է ունենաք ցածր եկամուտ կամ ոչինչ եւ քիչ դրամական միջոցներ: Դա նշանակում է, որ ձեզ պատկանող իրերի արժեքը չգերազանցի 2,000 դոլար՝ եթե դուք ամուրի եք, կամ 3,000 դոլար՝ եթե դուք ամուսնացած եք: Ձեր տան արժեքը հաշվի չի առնվում, եթե Դուք ապրում եք այդ տանը: Սովորաբար, Ձեր ավտոմեքենայի արժեքը նույնպես հաշվի չի առնվում: Բացի այդ, որոշակի այլ միջոցների, օրինակ՝ գերեզմանատեղի արժեքը, նույնպես կարող է հաշվի չառնվել:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար դուք պետք է դիմեք նաեւ որեւէ այլ կանխիկ նպաստների համար, որոնք դուք կարող եք ստանալ:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար դուք պետք է ապրեք Միացեալ Նահանգներում կամ Հյուսիսային Մարիյանայի կղզիներում: Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք, բայց օրինապես բնակվում եք Միացյալ Նահանգներում, Դուք դեռևս կարող եք SSI ստանալու հնարավորություն ունենալ: Լրացուցիչ տեղեկության համար կարդացեք *Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Օտար Քաղաքացիների Համար* հրատարակությունը (հրապարակման համար 05-11051-AM):

Կալիֆոռնիայի նահանգը գումար է ավելացնում դաշնակցային վճարումներին: Յուրաքանչյուր ամսվա սկզբման ձեր կողմից ստացված վճարումը ընդգրկում է դաշնակցային վճարումը եւ Կալիֆոռնիայից վճարվող լրացումը:

Բժշկական օգնություն

Եթե դուք ստանում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ, դուք ինքնաբերաբար կարող եք ստանալ նաեւ բժշկական օգնություն, Մէտիքէլ (Medi-Cal): Մէտիքէլի համար առանձին դիմում չի պահանջվում: Եթե Մէտիքէլի մասին հարցեր ունեք, խնդրում ենք կապ հաստատեք ձեր տեղական շրջանային բարեկեցության գրասենյակի հետ:

Լրացուցիչ սննդի աջակցության ծրագիր (SNAP)

Մարդիկ, ովքեր SSI են ստանում Կալիֆորնիայում, **չեն կարող** օգտվել Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրից (նախկինում՝ պարենային կտրոններ), քանի որ նահանգը դրա փոխարեն գումար է ավելացնում դաշնային SSI վճարումներին:

Այնուամենայնիվ, Դուք կարող եք SNAP ստանալու հնարավորություն ունենալ.

- Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումնագրի պատասխանը սպասելու ընթացքում.
- Եթե մերժվում է ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումը.
- Եթե դուք տեղափոխվում եք այլ նահանգ:

Լրացուցիչ տեղեկության համար դիմեք ձեր տեղական շրջանային բարեկեցության գրասենյակ:

Այլ սոցիալական ծառայություններ

Այլ ծառայություններ, որոնք դուք կարող եք ստանալ տեղական շրջանային բարեկեցության գրասենյակի միջոցով ընդգրկում են.

- Կույր կամ հաշմանդամ եղող մարդկանց օգնական շների համար հատուկ վճարում.
- Տնային աջակցության ծառայություններ. ինչպես նաեւ
- Պաշտպանիչ ծառայություններ:

Լրացուցիչ տեղեկության համար դիմեք ձեր տեղական շրջանային բարեկեցության գրասենյակ:

(շրջել)

Լրացուցիչ Ապահովության Եկամուտի ամսական վճարումների գումարները

Գումարները ընդգրկում են դաշնակցային եւ նահանգային վճարումները միախառն: Բոլոր Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստացողները չեն ստանում առավելագույն գումարը: Ձեր վճարումը կարող է ավելի ցածր լինել, եթե դուք ունեք այլ եկամուտ: Ապրիլից գումարները պիտի փոխվեն հետեւյալ աղիւսակի համեմատ.

Դասակարք	2013թ. ընդհանուր ամսական վճարում		
Ամուրի մարդիկ	***Տարեցներ***	***Հաշմանդամներ***	***Կույրեր***
Անկախ ապրող անձ	$866.40	$866.40	$921.40
Ոչ բժշկական ծերանոց (board and care)	$1,122.00	$1,122.00	$1,122.00
Անկախ ապրող անձ առանց խոհանոցային պայմաններու	$950.40	$950.40	$710.00
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող	$633.17	$633.17	$688.17
Հաշմանդամ երեխա (18 տարիքից պակաս)		$773.40	
Ուրիշ ընտանիքի հետ բնակող հաշմանդամ երեխա (18 տարիքից պակաս)		$540.17	
Տարեց կամ հաշմանդամ զույգեր			
Անկախ ապրող զույգ	$1,462.20		
Ոչ բժշկական ծերանոց (board and care)	$2,244.00		
Անկախ ապրող զույգ առանց խոհանոցային պայմաններու	$1,630.00		
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող զույգ	$1,112.00		
Կույր զույգեր			
Անկախ ապրող զույգ			$1,609.20
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող զույգ			$1,259.00
Կույր մարդ (կին) տարեց կամ հաշմանդամ կնոջ (ամուսնու) հետ			
Անկախ ապրող զույգ			$1,553.00
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող զույգ			$1,203.00

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-11125-AM
Supplemental Security Income
In California (Armenian)
January 2013